ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՏԱՇԻՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՍԱՐՉԱՊԵՏ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սարչապետ բնակավայրը կազմավորվել է 19-րդ դարի 20-30-ական թվականներին: Բնակչության հիմնական մասը գաղթել են Արևմտյան Հայաստանի Մուշից, Ալաշկերտ գավառի Մոլեսման գյուղից՝ տեղահանվելով վերոհիշյալ և մյուս գավառներից 1826-28թթ. Ռուս-Պարսկական պատերազմի օրերին: Ինչպես պատմում են, այսպիսի հալածական մի խումբ էլ մի օր իրենց ճռճռան սայլերով, սովահալած հասել են Լոք սարի լանջը, դեպի անտառ հասնելու միտումով: Բերնեբերան անցած պատմությունը հանգում է նրան, որ սայլի անիվը ջարդվել է, առաջընթացն ընդհատվել և հիշյալ ընտանիքները ծվարել են Վիրահայոց լեռների բարձրությամբ երկրորդ /Լալվարից հետո/ Լոք սարի ստորոտում, որը հյուսիսից սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը:
Բնակավայրը կրում է Սարչապետ անվանումը, որն երբևէ փոփոխության չի ենթարկվել և որի ծագումնաբանությունը հայտնի չէ:
Բնակավայրի կենտրոնում գտնվում է դեռևս 20-րդ դարի սկզբներին կառուցված կաթոլիկ եկեղեցին, որը խարխուլ է և փլվելու վտանգի տակ է: Բնակավայրն ունի ևս մեկ՝ գործող առաքելական եկեղեցի՝ կառուցված 2006 թ.:
2017 թ. համայնքների խոշորացման արդյունքում Սարչապետ բնակավայրը խոշորացվել է և թվով 7 բնակավայրերի հետ մտել Սարչապետ խոշորացված համայնքի կազմի մեջ՝ հանդիսանալով համայնքի կենտրոն, որտեղ գտնվել է և իր գործունեությունն է իրականացրել համայնքապետարանը և քաղաքացիների սպասարկման գրասենյակը: Այնուհետև 2022թ. նոր վարչատարածքային բաժանման արդյունքում նոր խոշորացման փուլով մտել է Տաշիր խոշորացված համայնքի կազմի մեջ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սարչապետ բնակավայրը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից 68 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 176 կմ: Բնակավայրը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Բարձրությունը ծովի մակարդակից 1705 մ է:
Բնակավայրի ռելիեֆը լեռնային է, խիստ էռոզացված, ամռանը զով է, ձմռանը չափավոր ցուրտ: Ձմռան տևողությունը 202 օր է, իսկ ամռանը՝ 163 օր: Տարեկան միջին ջերմաստիճանը 3.6 ^{0}C է, իսկ առավելագույնը՝ +28^{0}C-ից -30^{0}C է: Տարեկան տեղումների քանակը 700-720 մմ է: Առանձին տարիներին երաշտ է լինում: Կարկտային օրերի թիվը կազմում է 20-25 օր:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	700-720
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-5,+5
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	18

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Կալինինո/ Սարչապետ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	

2.1) համայնքի կենտրոնից (կմ)	0
2.2) մայրաքաղաքից (կմ)	176
2.3) մարզկենտրոնից (կմ)	68
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	11
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	16
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	10
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	68
3. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1705
4. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	22,1618/2216,18
5.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Նորաշեն, Արծնի, Պրիվոլնոյե, Լեռնահովիտ,
6. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	093678862
7. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո/1
8.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
9. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2098
2. Գրանցված ծնունդների քանակը	17
2.Մահացության դեպքերի քանակը	19
3.Ամուսնությունների քանակը	5
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	520
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	111
7. Կենսաթոշակառուների քանակը	320
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	125

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0

4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	110290
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	-
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	591

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1731,91
2. Բնակավայրերի հողեր (հա)	147,35
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	8,16
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	6,31
5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	5,23
7. Անտառային	315,06
8. Ջրային	2,17
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	350
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	275
11. Խոզերի գլուխաքանակը	37
12. Գյուղատնտեսական տեխնիկա	12
12.1 տրակտորներ (քանակը)	12
12.2 կոմբայններ (քանակը)	1
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	265

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	5

2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	26
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	այո
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	5
6.2 Էքսկավատորների քանակը	2
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025 թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	6
1.1 համայնքային ծառայողներ	4
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	1

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	**Ակնկալվող լուծումը**
Արդյունաբերական ձեռնարկությունների բացակայություն	Պետական ծրագրերի միջոցով ձեռնարկությունների հիմնում
Գյուղատնտեսությամբ զբաղվելու անհեռանկարայնություն	Սպառման շուկայի ստեղծում, կաթի մթերման գնի բարձրացում, բնակավայրի տարածքում դոնորների և համայնքի համագործակցությամբ կարկտակայանների տեղադրում
Զբոսաշրջության զարգացման անհեռանկարայնություն	Ժամանցի վայրի ստեղծում, հյուրատների ստեղծում կամ ստեղծման նպաստում
Արտագաղթ	Աշխատատեղերի ստեղծում՝ բարերար-համայնք-պետություն համագործակցության

	արդյունքում
Սպորտհրապարակների, մարզասրահների և խաղահրապարակների, կանաչ տարածքների բացակայություն	Պարզ տիպի խաղահրապարակների և սպորտհրապարակների կառուցում, կանաչ տարածությունների ընդլայնում, բարեկարգում՝ դոնորների և համայնքի համագործակցությամբ
Մշակույթի տան շահագործման անհնարինություն	Վերանորոգված մշակույթի տան շենքը համալրել անհրաժեշտ գույքով (աթոռներ և այլն), կազմակերպել և նպաստել ստեղծագործական և այլ խմբակների ստեղծումն ու գործունեությունը
Ջրահեռացման և ոռոգման համակարգերի բացակայություն	Ջրահեռացման և ոռոգման համակարգերի անցկացում
Միջբնակավայրային տրանսպորտային երթուղու բացակայություն	Միջբնակավայրային տրանսպորտային երթուղու գործարկում